


9738

L 6 m 24 1/2



ՄՐԵԱՀԱՆ ՏԵՍԱՆ ՄԵՐՈՅ

ԼԵՒՈՆԻ ԺԳ.

Ա.Ա.ՏՈՒԱ.ԾԱ.ՅԻՆ ՆԱԽԱ.ԽՆԱ.ՄՈՒԹԵԱ.ՄԲ

ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԻ

ԱՌԱ.ՔԵԼԱԿԱՆ ԹՈՒՂԹ

ՈՐՈՇ

ԱՐՏԱՔԻՑ ԿԱՐԳԻ ՑՈՒՑՎԵՑԱՆ

ԿԸ ՀՐԱ.ՏԱ.ՐԱ.ԿՈՒԻ



Կ-ՊՕԼԻՍ

1881

282  
L-44

24

2.05.2013

9738

282

-44

## ՊԱՏՈՒԱԿԱՆ ԵՂԲԱՐՅ

ՊՈ.ՏՐԻԱՐԲԱՅ, ՆԱԽԱԳԱՀԻՅ,

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ ԵՒ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ

ՈՐՔ

ԱՌԱԲԵԼՈՎՈՆ ՈԹՈՌՈՑՆ ՀԵՏ

ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆ ՈՒՆԻՒ

ԵՒ

ՄԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՈՅ ՀԱՄՈՐԷՆ ՀԱԽԱՏԱՅԵԼՈՅ Ի ՔՐԻՍՏՈ

ՈՂՋՈՅՆ ԵՒ ԱՌԱԲԵԼԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

## ԼԵՒՈՆ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ ԺԳ.

ՊԱՏՈՒԱԿԱՆ ԵՂԲԱՐՅ ԵՒ ՄԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՈՅ

Յեսուսի Քրիստոսի զինուորեալ Եկեղեցին՝ որ մարդկային ազգին փրկութեանն և բարօրութեանը կրնայ մեծապէս հոգ և խնամ տանիլ, ներկայ դժնդակ ժամանակացս մէջ այնպիսի ծանր կերպով մը տագնապած է որ՝ նորանոր փոթորկաց դէմ օր ըստ օրէ կը մաքառի, ճշմարտապէս նմանելով գեննեսարեթայ այն նաւակին՝ որ ահագին մրկով և ալիքներով կը տանջուէր, երբ օր մը դիմիսոս և իւր աշակերտները իւր վրայ առած կը տանէր։ Արդարեւ, այսօրուան օրս անոնք որ կաթուղիկէ անուան դէմ թշնամութեամբ վառուած են՝ թէ թուով, թէ զօրութեամբ և թէ յանդուգն խորհուրդներով չափէն աւելի կը յաւակնին։ և բաւական չեն սեպեր յայտնապէս մերժելու երկնային վարդապետութիւնները, այլ նաեւ բուռն զօրութեամբ և սաստկութեամբ կը ճգնին կամ Եկեղեցին մարդկային քաղաքական ընկերութենէն դուրս արտաքսելու, կամ գոնէ բոնադատելու որ՝ ինքը բանի մը կարող չ'ըլլայ ժողովրդեան հրապարակական բարուց նկատմամբ։ Ասկից կը հետեւի որ՝ ինքն իւր պաշ-



3462-88

տօնը կատարելու մէջ, զորն որ յԱստուածուստ իւր Հեղինակէն ընդունեցաւ, ամէն կողմանէ մեծամեծ դժուարութիւններով պատեալ պաշարեալ կը գտնուի :

Այս ամբարիչտ դաւաճանութեան ամենադառն պատուդները գլխաւորապէս Հռովմայ Քահանայապետին վրայ կը զեղուն, որուն օրինաւոր իրաւունքները մէկդի ձգուելով և իւր մեծամեծ պաշտամանց գործադրութեանը ամէն տեսակ արդելքներ դրուելով՝ արքունի վեհափառութեան ստուեր մը կը թողուի իրեն, իբր ՚ի նշաւակ ։ Ասոր համար Մենք՝ որ Վասուածային նախախնամութեան խորհրդովը այս սրբազն իշխանութեան կատարն ամբարձած ենք և ընդհանուր Եկեղեցւոյ հոգատարութիւնը ստանձնած ենք՝ շատոնցուընէ ՚ի վեր փորձով իմացանք և ստէպ ալ կրկնեցինք՝ թէ որչափ դժնդակ և թշուառ է այս վիճակը, ուր ժամանակիս փոփոխութիւնները մղեցին զՄեղզ ։ Զենք ուզեր մի առ մի ամէն բան յիշել. սակայն յայտնի են ամենուն այս Մեր Քաղքին մէջ շատ տարիներէ ՚ի վեր եղածները ։ Հոս արդարեւ՝ նոյն իսկ կաթուղիկէ ճշմարտութեան կեդրոնը՝ կրօնքին սրբութիւնը նշաւակեալ է, Առաքելական Աթոռոյն արժանապատութիւնը վնասուած և Քահանայապետական շուքն ու փառքը չարաբարոյ մարդկանց թշնամնայը յաճախ ենթակայ եղած է ։ Խել մը Հիմնարկութիւնք Մեր իշխանութենէն յափշտակուած են, զորս Մեր Նախորդները բարեպաշտութեամբ և առատաձեռնութեամբ հաստատած էին և Երենց Յաջորդացն ալ անեղծաբար պահպանելու աւանդած էին. և ոչ իսկ զիջողութիւն մ'եղաւ՝ որ անվնաս մնային Քրիստոնեաց առաջնորդները ու առաջնորդները այն սուրբ Հիմնարկութենէն իրաւունքները՝ որ արդարեւ ոչ միայն կրօնից, այլ և ազդաց քաղաքակրթութեանը շքեղապէս արդիւնաւոր եղած ըլլալով, անցեալ ժամանակաց մէջ բնաւ երբէք բռնարարութիւն մը կրած չէր ։ Կաթուղիկեայ ծխի տաճարներէն ոչ սակաւք կրած չէր ։ Կաթուղիկեայ ծխի տաճարներէն ոչ սակաւք փակուած կամ աշխարհական պիտոյից սեփականուած, և հերետիկոսական ծխի վերաբերեալները բազմացած են. թիւր և մոլար վարդապետութիւնք թէ դրով և թէ գործով մնարդել սփոռուած են ։ Անոնք որ ձեռքելնին իշխանութիւնին ունինք ստէպ անդամ կը ճգնին Եկեղեցւոյ և կաթու-

դիկեայ անուան վնասաբեր օրէնքներ հաստատելու . և այս բանս Մեր աչքին առջեւը կ'ըլլայ կոր՝ Մենք որ նոյն ինքն Աստուծոյ հրամանաւը Մեր ամէն հոգն ու խնամքը դէպ ՚ի այն կէտը պէտք է որ ուղղենք, որպէս զի ամբողջ և անարատ պահուին բրիտանէութեան օգուան և Եկեղեցւոյն իշխանութիւնները ։ Իսկ առանց բնաւ նկատողութեան առնուելու Հռովմայ Քահանայապետին վետհական իշխանութիւնը, նոյն իսկ Երիտասարդաց դաստիարակութեանն համար՝ Մեր իշխանութեանը արդելքներ կը յարուցուին. և եթէ ժողովառութիւն եղած է Մեղի (որ բանը նաեւ առանձին մէկու մը իսկ արդիլուած չէ) Մեր ծախիւքը չափահաս պատանեաց կրթութեանն համար դպրոցներ բանալ՝ անոնց մէջն անդամ քաղաքական օրինաց գմնդակ խստութիւնը բուռն եղանակաւ մուտ գտաւ ։ Այս ամէն իրաց տխուր և ողբալի տեսարանը այնչափ աւելի կը շարժէ զՄեղզ՝ որ զըրկուած ենք նպաստ մատուցանելու կարողութենէն, զոր մեծաւ փափաքանօք ունենալ կը տենչանք ։ Որովհետեւ աւելի ճշմարտապէս թշնամի իշխանութեան տակ ենք՝ քան թէ Մերինը կը վայելենք. և նոյն իսկ այս Մեղի չնորհուած ազատութեան գործածութիւնն ալ՝ որ ըստ հաճոյից այլոց կրնաց վերցուիլ կամ նուազիլ չունի տեւական նեցուկ մը հաստատութեան և մնայութեան ։

Ի վերաց այսոր ամենայնի՝ հանապազօրեայ փորձառութեամբ յայտնի կը տեսնուի որ չարութեատն ախտը առաւելքան զառաւել սպրդելով կը մնայ կոր քրիստոնեայ հասարակապետութեան զերծ մնայած մարմնոյն մէջ, և շատ տեղեր ալ տարածուելու վրայ է ։ Որովհետեւ Եկեղեցիէն հեռացած ազգերը օր ըստ օրէ մեծագոյն թշուառութեանց մէջ կ'իյնան. և ուր անդամ մը կաթուղիկեայ հաւատքը մարածիամ տկարցած է, հօն բաց է ճամբան մոլար կարծեաց և նորանոր իրաց ցանկութեանց ։ Եւ մինչդեռ կ'անարդուի Անոր գերագոյն և ազնուականագոյն իշխանութիւնը, որ երկրիս վրայ Աստուծոյ փոխանորդութիւնը կ'ընէ՝ յայտնի է որ ալ մարդկային իշխանութեան համար բաւական զօրաւոր սանձ չմնար, որով կարող ըլլայ զսպել ապստամբաց խեռոգիները, և կամ նուաճել ժողովրդոց յիմար ազատու-

թեան բորբոքը : - Եւ այս ամէն պատճառներուն համար է որ՝ թէպէտեւ մարդկան քաղաքային ընկերութիւնը արդէն իսկ մեծ աղէտքներ կրեց, սակայն մեծագոյն վտանգներու երկիւղէն կը սարսափի կոր :

Արդ՝ որպէս զի Եկեղեցին կարող ըլլայ թշնամեաց ճիգն մերժել և իւր պաշտօնը կատարել յօդուտ ամենեցուն, շտա աշխատութեանց և շատ մաքառմանց պէտք ունի : Սակայն այս բուռն և ղանազան տեսակ մրցման մէջ, յորում Աստուծոյ փառքն 'ի միջի կայ և հոգւոց յաւիտենական փրկութեանն համար կը մարտնչուի, անօդուտ կ'ըլլար մարդկանց բոլոր զօրութիւնն և հնարքը՝ եթէ չմատակարարուէին երկնային օդնութիւնք ըստ պատշաճողութեան ժամանակաց, - Ասոր համար քրիստոնէութեան դժուարին և ցաւալի պարագայներուն մէջ՝ միշտ այս եղաւ անձկութեանց և վշտաց համար սովորական ապաստանը, այսինքն ջերմաջերմ աղօթիւք և պաղատանօք խնդրել Աստուծմէ՝ որ օդնութեան հանի իւր տառապեալ Եկեղեցւոյն, և տայ իրեն զօրութիւն մարտնչելոյ և կարողութիւն յաղթանակելոյ : - Եւ արդ. Մեքնախնեաց ընտիր սովորութեանն և օրինակին հետեւելով, և քաջ դիտնալով որ Աստուած այնչափ աւելի դժած և ողորմած է՝ որչափ մեծ և զօրաւոր է մարդկանց զզջումն և իրեն հետ վերահաշտուելու կամքը, այս պատճառներուն համար՝ Մեք այս Թղթովը արտաքոյ կարգի սուրբ Յորելեան մը կը հրատարակենք կաթուղիկեայ տիեղերաց, երկինաւոր օդնութիւնն հայցելու և հոգւոց նպաստամատոյց ըլլալու վախճանաւու :

Ուստի ամենակարողին Աստուծոյ ողորմութեանն և Երանելի Առաքելոցն Պետրոսի և Պօղոսի իշխանութեանը վրայ վստահացեալ, Տեառն Մերոյ՝ Մեր անարժանութեանը արած կապելու և արձակելու իշխանութեամբը, համօրէն և իւրաքանչիւր երկսեռ հաւատացելոյ ՚ի Քրիստոս՝ ամէն մեղաց լիտակատար ներողութիւն կը չնորհենք հանգոյն ընդհանուր կայ Մարտ ամսոյն 19 էն (ըստ հին տոմարի՝ 7 էն) սկսեալ, որ նուիրեալ է ՚ի յեշատակ Արքոյն Յովսեփիս Երանեալ կտոսին Մարիամու Փեսային, մինչեւ ցաւաջին օր Նոյեմբերի փա-

զառութեամբ (ըստ հին տոմարի՝ Հոկտեմբեր 20), որ է օր հանդիսաւոր յիշատակի ամենայն սրբոց, իսկ Եւրոպայէն դուրս եղողները՝ սոյն այս Մարտի 19 էն (ըստ հին տոմարի՝ 7 էն) մինչեւ ցվերջին օր ներկայ 1881 ասրւոյն փաղառութեամբ (ըստ հին տոմարի՝ Դեկտեմբեր 19) - կատարելու ըլլան որոշուած հետեւեալ պայմանները, այսինքն :

Հումկիսյ բոլոր քաղաքացիք կամ հիւր Եկողները երկեր կու անգամ այցելութիւն ընեն Լատերանեան Մայր Եկեղեցւոյն եւս և վատիկանեան ու Լիբերեան Մայր Եկեղեցեաց, և հոն քիչ մը ժամանակ՝ կաթուղիկէ Եկեղեցւոյն և այս Առաքելուկան Ոմուռոյն պայծառութեանն ու բարգաւաճանացն համար, հերետիկոսութեանց ջնջման և ամէն մոլորեալներուն դարձին համար, քրիստոնեայ իշխանաց հաշտութեան և բոլոր հաւատացեալ ժողովրդեան խաղաղութեանն ու միութեանը համար՝ ըստ Մեք դիտաւորութեան, բարեպաշտաբար աղօթքներ մատուցանեն առ Աստուած . նմանապէս անոնք՝ բաց ՚ի այն օրերէն որք քառանորեայ պահոց շնորհատութեան մէջ պարունակուած չեն կամ նոյնպէս յիշրաւանց խիստ կոչուած ծոմապահութեան օրերէն դուրս զորս կը պատուիրէ Եկեղեցին՝ օր մը միայն պահքի կերակուր ու տելով ծոմ պահէն . առկից զատ՝ իրենց մնդքերը ըստ պատշաճի խոստովանելով՝ ամենասուրբ Հաղորդութեան խորհուրդն ընդունին, և բարեպաշտական ընկերութեանց մէկուն ողորմութեան անուամբ բան մը տան : Ասոր համար՝ այն Հիմնարկութիւնքը յականէ անուանէ կը յիշենք հոս, զորոնք վերջերս յանձնարարեցինք Մեք Թղթովը ՚ի հոգ և ՚ի խնամն գթութեան քրիստոնէից, այսինքն Տարածան Հաւատուածուի Վանկունեան և Արեւելէն Դպրոցներու Հիմնարկութիւնները . և շատ փափաքերի է Մեք ու որոշած ալ ենք ՚ի միտո Մեք այս ընկերութիւններն հաստատելու և ծաղկեցնելու նաեւ հետաւոր և վայրենաբնակ երկիրներու մէջ, որպէս զի ըստ պատշաճի այն տեղեաց հարկաւորութեանցն օգտակար ըլլան :

Իսկ ուրիշ ամէնքն որ այս Քաղքէս դուրս կը բնակին՝ ուր որ ալ ըլլան՝ իրենց առանձին վիճակաւորներէն կամ անոնց Փոխանորդներէն կամ Պաշտօնակալներէն կամ անոնց

հրամանաւը, և 'ի բացակայութեան իւրեանց՝ նոյն տեղուանքն հոգւոց հոդ ունեցողներուն ձեռօք որոշուելիք երեք Եկեղեցեաց՝ վերոյիշեալ ժամանակուան միջոցին մէջ երկերկու անդամ այցելութիւն ընեն. իսկ եթէ երկու Եկեղեցի միայն գտնուի՝ երեք երեք անդամ, և թէ որ մէկ Եկեղեցի մը միայն՝ վեց անդամ. նոյնպէս վերը ըստած միւս դործերն ալ 'ի դործ գնեն : - ի'ուղենք եւս որ՝ նոյն ներութութիւնը կարենայ նաեւ նպաստիլ և մերձեցուցուիլ այն հոգիներուն, որոնք միացեալ 'ի սէր Աստուծոյ փոխեցան աշխարհէս : - Եսկից զատ՝ կը չնորհենք աեղեաց վիճակաւորներուն, որ կարող ըլլան իրենց խոհեմութեան համեմատ նուաղեցնել այցելութեանց թիւը թէ աշխարհիկ և թէ կրօնաւորական ժողովոց և Միաբանութեանց համար, ինչպէս նաեւ որ և իցէ Ընկերութեանց՝ Եղբայրութեանց՝ Համալսարանաց կամ Վարժարանաց համար, որոնք թափորով յիշեալ Եկեղեցիներն այցելութեան երթան :

կը չնորհենք եւս՝ որ նաւորդներն և ճանապարհորդները երբ լրենց բնակութեան տեղն կամ ուրիշ նաւահանդիստ մը համնին, վեց անդամ այցելութիւն ընելով Աթուանիստ կամ Ժողովրդապետական Եկեղեցեոյն, և ըստ պատշաճի կատարելով վերոյիշեալ միւս դործերը, կարող ըլլան վաստը կիլ նոյն ներողութիւնը : - իսկ երկու անդ կը օնաւորական կարգաց համար՝ նաեւ անոնց համար որք մշտնջենաւորապէս մերաստանաց մէջ կը բնակին, ինչպէս նաեւ ուրիշ ու իցէ անձանց թէ աշխարհականաց և թէ Եկեղեցականաց (աշխարհիկ կամ կրօնաւորական կարգի) որոնք բանափ մէջ կամ մարմնոյ հիւանդութեամբ և կամ ուրիշ որ և իցէ արդարացի պատճառաւ արդիւուած են, միայն թէ յիշեալ դործերը կամ անոնցմէ մէկ քանին կատարեն՝ կը չնորհենք և թոյլ կուտանք որ խոստովանահայրը կարող ըլլաց զանոնք ուրիշ բարեպաշտական դործոց փոխել և կամ ուրիշ մերձակայ ժամանակի մը ձգել, իշխանութիւն տալով անոնց նաեւ անօրինելու չաղորդութիւնը այն տպայոց համար՝ որոնք տակաւին առաջին չաղորդութիւննին ընելու ընդունուած չեն :

Գարձեալ համօրէն և իւրաքանչիւր հաւտառացից Դիքիսառ՝ թէ աշխարհականաց և թէ Եկեղեցականաց (աշխարհականաց թէ այց ըլլան եւ թէ կին) որոնք խոստովանելու կուգան իրեն՝ առաջիկայ Յորեւեանը շահելու դիմամբ եւ զայն վաստկելու համար կարեւոր եղած միւս դործերը կասարելու մոօք, այս անդամուան համար եւ միայն յատենի խղճի մասց՝ արձակել բանագրանաց, կախակայութեան եւ ուրիշ Եկեղեցական վճրաներէն ու գաստակիներէն, որոնք յիշաւանց կամ 'ի մարդոց որ եւ իցէ պատճառաւ արուած կամ վերադրուած ըլլան, նաեւ անսոնցմէ՝ որոնք տեղեաց Վիճակաւորներուն եւ Մեզի կամ Առաքելական Սթոռոյ նէպէտեւ առանցինն եղանակաւ վերապահուած ըլլան եւ որպիսի եւ իցէ ընդպարձակ չնորհաման մէջ ալ բովանդակուած չի սեպուին, ինչպէս նաեւ նոյն Վիճակաւորներուն եւ Մեզի եւ Առաքելական Սթոռոյ՝ ինչպէս որ ըսինք՝ վերապահեալ ամէն մեղերէն ու ոճիրներէն՝ որչափ որ ծանր եւ անհեթեթ ալ ըլլան, այնպիսեաց համար վրկարար ապաշխարանք եւ յիշաւանց դրուելիք ապաշխարանաց ուրիշ

խարհիկ և կրօնաւորական դասու ) որոյ և իցէ եւս և առանձինն յիշաւակութեան արժանի կարգի և Հաստատութեան՝ իշխանութիւն կը չնորհենք որ ոյս վախճանիս համար կարող ըլլան իրենց խոստովանահայր ընտրել որ և է աշխարհիկ կամ կրօնաւոր քահանայ գործով հաւանեալ. այս իշխանութիւնը կրնան գործածել նաեւ Մայրապետք և նորընծայ կուսանք և մենաստանաց մէջ բնակող ուրիշ կանայք՝ միայն թէ խոստվանահայրը Մայրապետաց համար հաւանեալ ըլլայ : - իսկ խոստովանահայր կը չնորհենք ոյսու առթիւ և միայն ներկայ Յորեւերնին տեւողութեան ժամանակը՝ այն մի և նոյն իշխանութիւնները, զորս տուինք ուրիշ Յորեւեան մը չնորհած տաեննիս Մեր Առաքելական թղթովն որ « Ծայրական հայութեան » բառերով կը սկսի և 'ի 15 ֆետրուար ամսոյ 1879 տարւոյն հրատարակուած է . միշտ 'ի բաց առեալ սակայն այն ամէնքն՝ որոնց Մենք բացառութիւն ըրած էինք նոյն թղթովն մէջ (¹) :

Բայց որպէս զի այս Սուրբ Յորեւեանէն յառաջ գան ապահովագոյն և առատագոյն եղանակաւ Մեր բաղձացած փրկաւեալ պատվաները՝ պէտք է որ առհասարակ ամէն հաւ-

(¹) Ահաւասիկ յիշեալ Առաքելական Թղթով խոստովանահարց շնորհուած իշխանութիւնները .

« Խոստովանահայրը կարող է՝ վերոյիշեալ ժամանակուան միջոցին մէջ զանոնք (թէ այց ըլլան եւ թէ կին) որոնք խոստովանելու կուգան իրեն՝ առաջիկայ Յորեւեանը շահելու դիմամբ եւ զայն վաստկելու համար կարեւոր եղած միւս դործերը կասարելու մոօք, այս անդամուան համար եւ միայն յատենի խղճի մասց՝ արձակել բանագրանաց, կախակայութեան եւ ուրիշ Եկեղեցական վճրաներէն ու գաստակիներէն, որոնք յիշաւանց կամ 'ի մարդոց որ եւ իցէ պատճառաւ արուած կամ վերադրուած ըլլան, նաեւ անսոնցմէ՝ որոնք տեղեաց Վիճակաւորներուն եւ Մեզի կամ Առաքելական Սթոռոյ նէպէտեւ առանցինն եղանակաւ վերապահուած ըլլան եւ որպիսի եւ իցէ ընդպարձակ չնորհաման մէջ ալ բովանդակուած չի սեպուին, ինչպէս նաեւ նոյն Վիճակաւորներուն եւ Մեզի եւ Առաքելական Սթոռոյ՝ ինչպէս որ ըսինք՝ վերապահեալ ամէն մեղերէն ու ոճիրներէն՝ որչափ որ ծանր եւ անհեթեթ ալ ըլլան, այնպիսեաց համար վրկարար ապաշխարանք եւ յիշաւանց դրուելիք ապաշխարանաց ուրիշ

ւատացեալք մեծապէս փոյթ ու ջանք ունենան արժանանաւ լու գորովագութ ինսամաց Սուրբ կոյս Մարիամ՝ Աստուածած նին, և ասոր համար ալ մասնաւոր մեծարանք և պաշտօն մատուցանեն իրեն այս ժամանակուան մէջ : - իսկ այս Սուրբ Յորելեանը կը յանձնարարենք և կ'աւանդենք 'ի պաշտպանութիւն և 'ի խնամն Սրբոյն Յովլսեփայ՝ ամենամաքուր Փետական Երանեալ կուսին Մարիամու, զոր երջանկայիշատակ այսի Երանեալ կուսին Մարիամու, զոր երջանկայիշատակ Նախորդն Մեր Պիոս Թ. ընդհանուր Եկեղեցւոյ Պաշտպան հրատարակեց, և կը բազանք որ համօրէն հաւատացեալք 'ի Քրիստոս պաշտամագին հայցեն ամէն օր իւր օգնականութիւնը : - կը յորդորենք նաեւ զամէնքն՝ որ ջերմեռանդութեան համար ուխտագնացութիւններ ընեն Սրբոյ Տաճարներուն, որոնք այլեւայլ տեղեր առանձին և վաղեմի բարեւ պաշտութեամբ մը ըստ սովորութեան նուիրական և յարդելի բռնուած են . ասոնց մէջ յիտալիս նշանաւոր է Աստուածածին կուսին Մարիամու Լաւրեառնեան Սուրբ Տունը, որ կարի պանծալի է վսեմագոյն խորհրդոց յիշատակաւը :

գործեր գնելով արձակել . եւ եթէ իրն հերետիկոսութեան վրայ ըլլայ, ըստ իրաւանց՝ նախ եւ առաջ հրաժարումն առնելով եւ մոլու ըլլայ, ըստ իրաւանց՝ նախ եւ առաջ հրաժարումն առնելով արձակել : Դարձեալ նոյն ըութիւններէն յետս կոչումն ընել տալով արձակել : Դարձեալ նոյն խոստովանահայր քահանան կարող է ուրիշ բարեպաշտական եւ դրկարար գործոց փոխել նաեւ երգուեալ եւ Առաքելական Սրբուոյ վերապահեալ որ եւ իցէ ուխտերը (միշտ 'ի բաց առնելով ողջախուն հութեան, կրօնքի եւ պարաւորութեան վերաբերեալներն, որք երրորդ անձէ մը ընդունուած են կամ որոնց մէջ երրորդ անձ մը կը բրորդ անձէ մը ընդունուած են կամ որոնց մէջ երրորդ անձ մը կը վեստուի, 'ի բաց առեալ նոյնապէս պատճական ուխտերը՝ որոնք մեղքէ զգուշացուցիչ կ'անուանուին, միայն թէ փոխանակութիւնն այնք պատճական որ ուխտին նախնական նվութին չստի մեղքէ զգուշացնէ), պիսի ըլլայ՝ որ ուխտին նախնական ալ ունենալու ըլլան, եւ այսպիսի ապաշխարովք սուրբ աստիճաններ ալ ունենալու ըլլան, եւ ի կրօնաւորական կարգի՝ կարող եւ մարթ ըլլայ սմօրինել մի միայն գատակնքոց բռնարարութենէն յառաջ եկած գաղտնի անկանոնութենէն, որ կ'արգելու նոյն աստիճանները 'ի գործ դնել եւ վերնագոյններն ընդունիլ :

« Սակայն Մեր միաքն այն չէ որ առաջիկայիւս ամսօրիններ ու բիշ որ եւ է անկանոնութենէ կամ յանցանքէ կամ պակասութենէ, եւ կամ հրապարակական կամ պակասութենէ կամ ծանօթ կամ ուրիշ անըն-

կամ որոյ՝ զօրութեամբ սրբոյ հնազանդութեան կը հըրամայենք և կը պատուիրենք համօրէն և իւրաքանչիւր տեղեաց վիճակաւորներուն և անոնց փոխանորդներուն և Պատանականին հոգւուց հոգ ունեցողներուն, կամ բայցակայ եղած ժամանակնին՝ հոգւուց հոգ ունեցողներուն, որ առաջիկայ թղթոյս ձեռագիր և կամ նաեւ ապուած օրինակներն ընդունածնուն պէս՝ իւրաքանչիւր ոք զանոնք իր թեմին մէջ հրատարակելու հոգտանի, և կարելի եղածին չափ ժողովուրդները պատրաստելով ըստ օրինի՝ եւս և Աստուծոյ բանին քարոզութեամբ համար պէտք եղած կամ Եկեղեցիներն որոշեն :

Եւ որպէս զի Մեր առաջիկայ թուղթը, զոր չէ հնար խաւրել ամէն տեղ, գիւրագոյն կերպով ծանօթանայ ամէնուն՝ կ'ուղենք որ անոր ձեռագիր կամ նաեւ ապուած օրինակներուն, յետոյ որ հրապարակական Նօտարի մը ձեռօք ասորագրուած և Եկեղեցական արժանապատութեամբ ճուացեալ անձի մը կնքով զօրացած են, ամենուրեք միեւնոյն

գունակութենէ կամ անկարութենէ, յորում որ եւ իցէ կերպով մէկն ինկած ըլլայ . կամ թէ իշխանութիւն տանք՝ որ նախնթացները անօրինէ կամ հաստատէ եւ առաջուան վիճակն դարձնէ, եւս եւ յատենի խղճի մասց . եւ ոչ ալ միաք ունինք խափանել Մեր Նախորդին երջանկայիշատակ Բնենեղիկասու ՓԳ. ին առանձին յայտարարութիւններով հրատարակած Անհմանադրութիւնը, որուն սկիզբն է Խորհուրդ Առաջնորդութեան . ոչ ալ կ'ուղենք վերջապէս՝ որ առաջիկայս որ եւ է կերպով կրնայ նպաստել կամ պիսի նպաստէ անոնց որոնք Մեղմէ եւ Առաքելական Աթոռէն կամ Նպիսկոպոսէ եւ կամ Եկեղեցական Դատաւորէ մը յականէ անուանէ բանալրեալ՝ կամ Եկեղեցական պատճական առաջարարական առեալ՝ եթէ վերջիշեալ մամանուկուան միջոցին մէջ փոխարինած ըլլան, եւ վկասեալ անձանց հետ ալ եթէ հարկ ըլլայ՝ հաշտուած ըլլան : Իսկ եթէ վերը սահմանուած ժամանակուան մէջ ըստ գատաման խոստովանահօք՝ չեն կարող փոխարինելու, կը չնորհենք որ՝ միայն Յորելինի ներողութիւնները չանելու վախճանաւ կարենան արձակուիլ յատենի խղճի մասց, պարտաւորելով զիրենք 'ի փոխարինութիւն որչափ կարելի է չուտով :

հաւատքն ընծայուի՝ ինչպէս պիտոր ընծայուեր առաջիկայիս,  
եթէ ՚ի մէջ բերուեր կամ ցուցուեր։  
Տուեալ ՚ի Հռովմա առ Սրբոյն Պետրոսի, ընդ մասան  
եաւ Զինորսի, յ12 աւուր Մարտի 1884 ամի, Մեր Քահանայապետութեան Զորբորդ տարին։

## ՀՐԱՀԱՆԳ

ՎԱՍԻ

## ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՎԻՃԱԿԻՆ

Կ-ՊՈԼՍՈՅ

ԼԵՒՈՆ ԳՈՀԱՆՈՅԱՊԵՏ ԺԳ.

Բերկրալից սրաիւ կը հրատարակենք Քահանայապետական Կոնգակը Կ. Պօլսոյ Պատրիարքական վիճակին մէջ, որով Ցիսուսի Քրիստոսի Փոխանորդն երկնաձիր բարեաց հոսանքները բերող Ցորելեան մը կը չնորհէ համօրէն Կաթուղիկեայ տիեզերաց։ Ուստի առաջիկայ Ապրիլ ամսոյն 5/17 էն կիրակի օրուընէ սկսեալ՝ որ է տօն Ծագկադարդի, Ցորելեան ներողաթիւնը հրատարակեալ է այս Պատրիարքական թեմին մէջ, եւ պիտոր տեւէ՝ Քաղաքիա Եւրոպական կողման բնակչաց համար՝ մինչեւ ց20 Հոկտեմբերի / 1 նոյեմբերի փաղառութեամբ, իսկ Ասիոյ ափունքը բնակողներուն նկատմամբ՝ մինչեւ ց19/31 Դեկտեմբերի ներկայ տարւոյս նոյնպէս փաղառութեամբ։ Ցորելինին բացման օրը, այսինքն Ծաղկազարդի կիրակին՝ հանդիսաւոր հրատարակութեան ժամանակը ընդհանուր զանգակահարութիւն պիտոր ըլլայ։ Այս առթիւ զուրցուելիք ազօթքներն իւրաքանչիւր ժիւր ժողովրդապետաց իմացուցած ենք առանձինն եղանակաւ։

Իսկ Ցորելեան ներողաթիւնը շահելու համար գործադրուելիք պայմաններն ասոնք են։

Ա. Պէտք է խոստովանիլ ճշմարիտ սրտի զղջմամբ։ Ամէն քահանայ՝ որ խոստովանանք ընկելու իշխանութիւն ունի, կրնայ մաստակարարել հաւատացելոց խոստովանութեան Սուրբ Խորհուրդը։ Իշխանութիւն տրուած է նաեւ՝ մէկ անգամ միայն եւ ՚ի չնորհս այսր Ցորելինին՝ Սուրբ Աթուոյն եւ Մեզի վերապահուած գատակնոց դէպքելն արձակել յատենի խոստովանութեան, պարզ ուխտեցը



փոխել՝ օրինաւոր պատճառ եղած ատեն . պահելով սակայն Սրբազն Քահանայապետին Կոնդակին մէջը նշանակուած ամիսիմունքները :

Բ. Արժանաւոր պատրաստութեամբ ընդունիլ զՍուրբ Հաղորդութիւն : Հաւատացեալք կարող են կատարել այս պայմանը՝ Մայրաքաղաքիս եւ իւր արուարձանաց կամ գիւղօրէից մէջ գտնուած ուղղափառ Եկեղեցիները կամ Մատուռները . սակայն լաւագոյն է որ՝ ամէն մէկը իւր ժողովրդապետական Եկեղեցւոյն կամ Մատրան մէջ կատարէ նոյնը : Իսկ Զատկական Հաղորդութեան պարտքը դեռ չկատարողներն պէտք է գիտնան՝ որ նոյնովը չեն կրնար Յոբեկանը շահիլ , այլ նոյն պարտքին կատարմանէն՝ ի զատ՝ Յոբեկանը վաստը կելու համար նորէն խոստովանելու եւ հաղորդուելու են : – Առաջին Հաղորդութիւնը տակաւին չ'ընդունող մանկանց՝ կրնան խոստովանահարք հաղորդելու պարտքը տնօրինել , եւ ի փոխարէն աղօթք կամ հասուցման ուրիշ գործել դնել :

Գ. Եկեղեցեաց այցելութիւն ընել . այսինքն երկերկու անդամ երեք Եկեղեցի այցելութեան երթալ , ուր երկու Եկեղեցի միայն գտնուի՝ ամէն մէկուն երեք այցելութիւն . իսկ թէ որ մէկ Եկեղեցի մը միայն գտնուի՝ վեց անդամ այցելել . եւ այս այցելութեանց ժամանակ աղօթել ըստ դիտաւորութեան Սրբազն Քահանայապետին՝ վասն պայծառութեան Սրբոց Եկեղեցւոյ , վասն ջնջման հերետիկուութեանց եւ բարձման հերձուածոց , վասն դարձի մեղաւորաց եւ վասն խաղաղութեան եւ միութեան Քրիստոնէից : – Այցելութեան համար կ'որոշենք ամէն մէկուն իւր ժողովրդապետական Եկեղեցին , եւ մէկ կամ երկու ուրիշ ուղղափառ Եկեղեցին եթէ գտնուին :

Դ. Յոբեկանը շահելու համար սահմանուած պայմաններէն մէկն ալ ծոմն է , որ կը կայանայ մէկ օր մը ըստ սովորութեան ծոմ բըռնել՝ հրաժարելով նոյն օրը նաեւ ի մսեղինաց եւ ի կաթնեղինաց :

Ե. Քահանայապետական կոնդակը կը պատուիրէ հաւատացելոց՝ ողորմութիւն տալ . եւ առանձինն եղանակաւ Սրբազն Պապը կը յորդորէ՝ որ այս ողորմութիւնը հետեւեալ բարեպաշտական գործոց նուիրուին , այսինքն Տարածման Հաւատացոյ (Լիոնի) , Յէսուսէ Քէսուսէ Մանէնիւան եւ Արէւելէլէ Գորոցներու Հիմնարկութեանց :

Զ. Խոստովանահարց իշխանութիւն արուած է Եկեղեցեաց այցելութիւնքն ըստ բոլորին կամ ըստ մասին անօրինել անոնց համար՝ որ օրինաւոր արգելքներով խափանուած են , եւ ի փոխարէն՝ ողորմութեան եւ բարեպաշտական գործեր դնել , ինչպէս պատշաճ եւ յարմար գատելու ըլլան :

Է. Յոբեկան ներողութիւնը կրնան Հաւատացեալք Քաւարանի հոգւոց եւս մերձեցնել :

Ը. Կը պատուիրէնք ամենայն ժողովրդապետաց եւ Մեծաւորաց Եկեղեցեաց եւ Մատրանց Մայրաքաղաքին՝ որ իւրաքանչիւր ոք իւր Եկեղեցւոյն կամ Մատրան մէջ ընթեռնու Սրբազն Քահանայապետին չնորհագիր Կոնդակին հետ այս Հրահանգն եւս 'ի լուր ժողովրդեան՝ հրապարակաւ եւ սովորական համարիսութեամբ :

Տուեալ ՚ի Կարողիկոսարանի Հայոց Ուղղափառաց,  
՚ի Բերա Կ-Պօլսի , ՚ի 4/13 Ապրիլի 1884:

(ՏԵՂԻ ԿՆՔՈՅՑ)

ՍՏԵՓԱՆ Վ. ԱԶԱՐԵԱՆ  
Արքայիսկոպոս Նիկոսիոյ  
Տեղապահ Կարողիկոսական Աքոնոյ

ԱՆԴՐԵԱՆ Վ. ԱՂԵՔԱՆԴՐԵԱՆ  
Քարտուղար ԿԹ .

1/95



